«ՍԳԿԿ» ԻԿԿ Կ ա ր գ ա պ ա հ ա կ ա ն հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի ն ի ս տ ի

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Թ Ի Վ

(Կազմված է «08» օգոստոս 2024թ. և բաղկացած է 9 (ինն էջից)

ք. Երևան, Արշակունյաց 5.108 սենյակ
08.08.2024թ., ժամը 16:00

Համաձայն 28.03.2024թ.-ի «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ ԱՁ Վարազդատ Դավթյանի ներկայացուցիչ Քրիստինե Գագիկի Տոնոյանի կողմից ստացված դիմումը ԱՁ Վարազդատ Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու նպատակով ս/թ.-ի հուլիսի 30-ին հրավիրված է Կարգապահական հանձնաժողովի նիստ:

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը

ԱՁ Վարազդատ Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանը

Դիմումատու՝ ԱՁ Վարազդատ Դավթյանի ներկայացուցիչ Քրիստինե Տոնոյանը

ՍԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝Արմինե Մովսիսյանը

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը

Հանձնաժողովի անդամ Հարություն Գևորգյանը

Խաչիկ Նազարյանի անունից հանդես էր եկել իր ներկայացուցիչ Վարազդատ Ասատրյանը :

Դիմումատու պարտապան ԱՁ Վարազդատ Դավթյանը և վերջինիս ներկայացուցիչ Քրիստինե Տոնոյանը :

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ ԱՁ Վարազդատ Դավթյանի ներկայացուցիչ Քրիստինե Տոնոյանի կողմից ստացված դիմումը ԱՁ Վարազդատ Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի վարքագծի գործողություններում կառավարչի վարքագծի կանոնների խախտման հնարավոր առկայության քննարկման հարցը.

ԼՍԵՑԻՆ

Կարգապահական հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին, ով առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը: Դիմումատուն ներկայացրեց բողոքը ,իրենց փաստերով և նաև լսվեց Խաչիկ Նազարյանի ներկայացուցիչ Վարադատ Ասատրյանի կողմից ներկայացված բանավոր պատասխանը և առաջարկվեց սնանկության գործով կառավարչի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Հարցի վերաբերյալ ելույթի ձայն վերցրեց հանձնաժողովի անդամ Ռուբեն Խալաթյանը և նշեց, որ սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի գործողություններում կան կարգապահական խախտումներ, որոնց քննման և վեր հանման համար անհրաժեշտ է հարուցել Կարգապահական վարույթ և քննել բողոքում առծածված հանգամանքները:

Առաջարկը դրվեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 3

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ

ԱՁ Վարազդատ Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի նկատմամբ՝ «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ ԱՁ Վարազդատ Դավթյանի ներկայացուցիչ Քրիստինե Տոնոյանի կողմից ստացված դիմումը ԱՁ Վարազդատ Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի գործողություններում «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի» կանոնների խախտման դեպքերի վերհանման համար հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ

Հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին, ով առաջարկեց աշխատանքային հետևյալ կարգը՝

1.Ուսումնասիրել բողոքաբեր ԱՁ Վարազդատ Դավթյանի ներկայացուցիչ Քրիստինե Տոնոյանի տրամադրած փաստաթղթերը.

2.Ուսումնասիրել կառավարիչ Խաչիկ Նազարյանի կողմից ներկայացվող փաստաթղթերը:

Հանձնաժողովի անդամները, բողոքաբերը և նրա ներկայացուցիչը ,նաև սնանկության գործով կառավարչի ներկայացուցիչը համաձայնեցին աշխատանքային կարգին :

Ձայն վերցրեց ԱՁ Վարազդատ Դավթյանի ներկայացուցիչ Քրիստինե Տոնոյանը ,ով հայտնեց ,որ Սնանկության դատարանի 18.02.2021 թ թիվ ՍՆԴ վճռով /3123/04/20 սնանկության գործով ԱՁ Վարազդատ Դավթյանը ճանաչվել է սնանկ և նույն դատարանի որոշմամբ պարտապանի սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Խաչիկ Նազարյանը :Հայտնեց ,որ կառավարիչ նշանակվելուց հետո մինչ օրս Խաչիկ Նազարայանը իր լիազորությունները կատարում է թերի ,ակնհայտ ու կոպիտ խախտումներով ,ինչն էլ հանգեցրել է պարտապան Վարազդատ

Դավթյանի իրավունքների խախտման : Մասնավորապես հարցումներին ու դիմումներին չպատասխանելու և գործի նյութերը Պարտապանին չտրամադրելու հիմքերով խախտումներ :

Խաչիկ Նազարյանը մշտապես մերժել է տրամադրել պահանջվող փաստաթղթերը պարտապանի առաջարկելով բոլոր Ձեզ անհրաժեշտ նյութերին ծանոթանալու համար կարող եք դիմել դատարան և ծանոթանալ գործում առկա նյութերին : Բացի դա նշել է ,որ սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանը մինչ օրս չի կատարել նաև սույն գործով ՀՀ սնանկության դատարանի <Սնանկության գործի նյութերը տրամադրելու մասին դիմումը քննության առնելու վերաբերյալ 10.04.2023 թվականի որոշումը մասնավորապես 03.04.2024թվականին սնանկության գործի նյութերը տրամադրել պարտավորեցնելու մասին դիմումով Դատարանի որոշմամբ բավարավել է և պարտավորեցվել է սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանին նույն սնանկության գործով պարտապան ԱՁ Վարազդատ Դավթյանին տրամադրել սնանկության գործին վերաբերելի բոլոր փաստաթղթերը մասնավորապես միջանկյալ բաշխման ծրագրով ներկայացված պահանջների չափի, գոյացման իրավական հիմքերի ,պայմանագրերի ,վճարման անդորրագրերի և այլ փաստաթղթերի պատճենները :Նշված որոշման դեմ սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք ,որը սակայն ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.11.2023թվականի որոշմամբ մերժվել է : Նշեց նաև ,որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը սնանկության գործով 21.11.2023 թվականի որոշումը սնանկության գործով կառավարիչն ուղարկել է դեռևս 28.11.2023թվականին ,իսկ վերջինիս կողմից որոշումը ստացվել է 01.12.2023թվականին կցել են նաև ապացույցները :Որոշումը հրապարակումից տևական ժամանակ անց չստանալով գործի նյութերը 11.03.2024 թվականաին դիմել են ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան խնդրելով տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե նշված որոշումը երբ է ուղարկվել սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանին : Ի պատասխան դիմումի ՀՀ քաղաքացիական

դատարանի 14.03.2024թվականի գրության Խաչիկ Նազարայանին դեռևս ուղարկվել է 28.11.2023թվականին ,որը ստացել է 01.12.2023 թվականին :

Հարց 2 ՀՀ ք Երևան ,Մոլդովական փողոց 24/1 թիվ 38 տարածքը երրորդ անձին ի պահ տալու հետ կապված խախտումների մասով :

Մասնավորապես անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 2477679 վկայականի համաձայն ՀՀ ք Երևան ,Մոլդովական24/1 թիվ 38տարածքի նկատմամբ գրանցված է պարտապան Վարազդատ Դավթյանի միանձնյա սեփականության իրավունքը :

24.08.2023թվականին դիմելով կառավարիչ Խաչիկ Նազարյանի՝ խնդրել են տրամադրել տեղեկատվություն ՀՀ ք Երևան ,Մոլդովական24/1 թիվ 38տարածքի վերաբերյալ ,մասնավորապես այն մասին ,թե նշված անշարժ գույքը ում է ի պահ հանձնվել , երբվանից և ինչ հիմքով: Միաժամանակ խնդրել են,որ տրամադրել նշված տարածքի ի պահ հանձնելու վերաբերյալ կազմված բոլոր փաստաթղթերի պատասխանները :

Ի պատասխան դիմումի 30.08.2023 թվականին ստացվել է կառավարչի կողմից պատասխան գրություն ,որում ասվում է , որ ՀՀ ք Երևան ,Մոլդովական24/1 թիվ 38տարածքի անշարժ գույքը չի պատկանում ԱՁ Վարազդատ Դավթյանին :

ՀՀ ք Երևան ,Մոլդովական24/1 թիվ 38տարածքի անշարժ գույքը պատկանում է Վարազդատ Դավթյանին և Գայանե Ոսկանյանին որպես ամուսնության ընթացքում ձեռք բերված գույք :

ՀՀ ք Երևան ,Մոլդովական24/1 թիվ 38տարածքի և 36հասցեները ի պահ են հանձնվել Գայանե Ոսկանյանին :

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում ներկայումս քննվում է թիվ ԿԴ2/0959/02/15քաղաքացիական գործը համատեղ սեփականության իրավունքը ճանաչելու ,ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքից բաժինը բնեղենով առանձնացնելու ,համատեղ սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ …,որով նշված է 2023թ հոկտեմբերի 05ին դատական նիստ :

30.08.2023թվականի պատասխան գրությունից հետևում է ,որ սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանը զբաղվել է <ինքնիրավչությամբ> մասնավորապես վերջիս անտեսելով այն հանգամանքը ,որ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման համար 2477679 վկայականով ՀՀ ք

Երևան ,Մոլդովական 24/1 թիվ 38տարածքի նկատմամբ գրանցված է Վարազդատ Դավթյանի սեփականության իրավունքը և այն որ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԿԴ2/0959/02/15քաղաքացիական գործով նշված տարածքի նկատմամբ Գայանե Ոսկանյանի սեփականության իրավունքը ճանաչված չէ :Կառավարիչը ինքն իրեն պարզապես որոշել է ,որ ՀՀ ք Երևան ,Մոլդովական24/1 թիվ 38 տարածքը չի պատկանում ԱՁ Վարազդատ Դավթյանին ,այլ պատկանում է Վարազդատ Դավթյանին և Գայանե Ոսկանյանին : Արդյունքում ստացվում է ,որ սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանը դուրս գալով իր իրավասության շրջանակներից և ստանձնելով ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի լիազորությունները ինքն իրեն արդեն իսկ որոշել է թիվ ԿԴ2/0959/02/15քաղաքացիական գործի ելքը և ՀՀ ք Երևան ,Մոլդովական24/1 թիվ 38տարածքի նկատմամբ ճանաչվել է Գայանե Ոսկանյանի սեփակության իրավունքը և որոշել գույքն ի պահ հանձնել Գայանե Ոսկանյանի, որի իավասությունը <Սնանկության մասին > ՀՀ օրենքով չուներ :Սնանկության գործով կառավարիչը արտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները պարտապանին պատկանող գույքը պահպանելու համար:

Այսպիսով ելնելով վերոգրյալից պետք է փաստել ,որ սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանը պարտապան Վարազդատ Դավթյանին պատկանող ՀՀ ք Երևան ,Մոլդովական24/1 թիվ 38տարածքը ի պահ է հանձնել գույքի նկատմամբ որևէ իրավունք չունեցող անձի՝ պարտատեր Գայանե Ոսկանյանին ,ով նշված տարածքում իրականացնում է ձեռանարկատիրական գործունեություն և ստանում եկամուտ ,իսկ դա ոչ միայն օրենքի խախտում է այլև իր հեթին հիմք է տալիս ենթադրելու ,որ սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանը համագործակցում է պարտատեր Գայանե Ոսկանյանի հետ և վերջինիս կողմից նշված հասցեում իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունից մասնաբաժին է ստանում :Հաշվի առնելով այն հանգամանքը ,որ պարտապանին պատկանող ՀՀ ք Երևան ,Մոլդովական24/1 թիվ 38տարածքում առանց գույքը տիրապետելու ու օգտագործելու օրինական հիմքերի առկայության ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ գույքի նկատմամբ ներկայումս որևէ իրավունք չունեցող անձը՝Գայանե Ոսկանյանը ,ապա հարց է առաջանում ,ինչու կառավարիչ Խաչիկ Նազարյանը գույքը չի հանձնել վարձակալության և դրանից գոյացած գումարը ուղղել

պատատերերի պահանջների բավարարմանը ,կամ չի ներկայացրել ֆինանսական առողջացման ծրագիր ,մասավորապես `միաժամանակ նշենք նաև ,որ պարտապանի գույքը ի պահն հանձնելիս կառավարիչը պարտավոր էր ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կնքել Պայմանագիր :

Հարց 3թիվ ԿԴ2/0959/02/15քաղաքացիական գործով դատական նիստերին չներկայանալու մասով :

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է քննվում թիվ **ԿԴ2/0959/02/15քաղաքացիական գործը** ,որում պարտապան Վարազդատ Դավթյանը հանդիսանում է սկզբնական հայցով պատասխանող և հակընդեմ հայցով հայցվոր :Դատարանը քաղաքացիական գործով որպես սկզբնական հայցով պատասխանող հակնդեմ հայցով հայցվոր Վարազդատ Դավթյանի ներկայացուցիչ ներգրավել է սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանին ,ով սակայն նշված գործով ,առանց որևէ պատճառաբանության մինչև օրս որևէ դատական նիստի չի մասնակցել ,մինչ դեռ պարտավոր էր մասնակվել :

Բացի այդ նշենք նաև ,որ սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանը պարտապան Վարազդատ Դավթյանին չի տեղեկացրել վերջինիս պատկանած ՀՀ ք Երևան ,Մոլդովական24/1 թիվ 36 շինություն հասցեում գտնվող անշարժ գույքի վաճառքի մասին սկսած գույքի գնահատումից ,մինչև բուն վաճառքի իրականացումը :Հետևաբար կարող ենք փաստել ,որ սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանը թիվ ՍնԴ/3123/04/20 սնանկության գործի շրջանակում իր լիազորությունները իրականացնելիս դիտավորյալ կերպով թույլ է տվել ,ինչպես <Սնանկության մասին> ՀՀ օրենքի պահանջների ակնհայտ խախտում ,այնպես էլ կառավարիչների մասնագիտական վարքագծի կանոնների խախտում :

Վկայակոչված փաստերից և կից ներկայացված փաստաթղթերից հետևում է ,որ սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանը խախտել է սնանկության գործով կառավարչի վարքագծի կանոնագրքի 1.1 ,1.3,1.4,1.5,1.7,1.8,1.10,1.11,1.12,1.22, 2.1,2.6 7.5 և 7.8 դրույթների պահանջները :

Լսվելով նաև սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազրյանի ներկայացուցիչ Վարազդատ Ասատրյանին ,ով բանավոր կերպով նշվեց ,որ կառավարչի կողմից կատարվել է օրենքով սահմանված և իր լիազորությունների շրջանակներում բոլոր գործողությունները , վերջինս

առաջարկեց ,որ նիստը հետաձգել լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու հիմքով :

Քվարկություն արվեց ,նիստը հետաձգելու վերաբերյալ և բոլորը <կողմ > առաջարկեցին ,հետևաբար այն հետաձգվեց և նշանակվեց այլ հերթի :

Հերթական կարգապահական նիստը կայացավ 2024թվականի օգոստոսի 08-ին ,որին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները և պարտապան ԱՁ Վարազդատ Դավթյանը՝ իր ներկայացուցիչ Քրիստինե Տոնոյանի հետ : Սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանը չէր մասնակցում և որևէ փաստաթուղթ չէր ներկայացրել կարգապահական հանձնաժողովին ,միևնույն ժամանակ տեղյակ չէր պահել իր բացակայության համար :

Ապացուցողական բոլոր փաստաթղթերը հանձնվեցին հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին և հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովի անդամները համաձայնեցին այն մտքին, որ ներկայացված փաստական հանգամանքները բավական են, որ սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ կայացվի ժողովի որոշում:

Հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանը առաջարկը դրեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 3

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

ՀՀ «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ ԱՁ Վարազդատ Դավթյանի ներկայացուցիչ Քրիստինե Տոնոյանի կողմից ստացված դիմումը ԱՁ Վարազդատ Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազայանի գործողություններում կան կոպիտ խախտումներ, մանավորապես չի կատարել իրեն վերապահված գործողությունները՝ հատկապես պարտապանին չի տրամադրել

միջանկյալ բաշխման ծրագիրը, անհիմն մերժել է պարտպանի կողմից ներկայացված դիմումները գործի նյութերին ծանոթանալու համար ,չի կատարել դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումը :

Հետևաբար առկա է «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի Էթիկայի» կանոնների խախտման դեպք , և <Սնանկության մասին> օրենքի 27.5. Կառավարչի նկատմամբ կիրառվում է կարգապահական տույժ օրենքի 27.2-րդ հոդվածով նախատեսված հիմքերով նկատողություն.

Հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանը առաջարկը դրեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 3

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

ԱՁ Վարազդատ Դավթյանի ներկայացուցիչ Քրիստինե Տոնոյանի կողմից ստացված դիմումը ԱՁ Վարազդատ Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազայանի նկատմամբ կիրառել է կարգապահական տույժ **նկատողություն**.

2.Սույն Որոշումը և նյութերը ներկայացնել «ՍԳԿԿ»ԻԿԿ համապատասխան կառավարման մարմնի հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Արմինե Մովսիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռուբեն Խալաթյան

Արմենակ Աղամյան

Հարություն Գևորգյան